303(479.243) Պատմություն

Արևիկ Պետրոսյան,
պ.գ.թ, դոցենտ
ԱրՊՀ

ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻ ԱՅԻՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ԼՂՀ-ՈՒՄ ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՆ ԱՐԳԵԼԱԿՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Մոդեռնիզացիայի ընթացքում տեղի է ունենում անցում ժամանակակից հասարակությանը (modern society):Մեծ անկման հետևանքով առաջացած կապիտալիզմի փոխակերպման գործընթացը բերել է մոդեռնիզացիայի երկու տարբերակի՝ մասնակիորեն կարգավորվող տնտեսության ստեղծմանն ուղղված բարեփոխումների տարբերակին, որը արմատապես փոխել է կապիտալիզմի տեսքը և տոտալիտարը: ԼՂՀ-ում մոդեռնիզացիայի ընթացքը արգելակող գործոններ ժողովրդավարության ոչ բավարար զարգացումն է և որպես անհատակ մոդեռնիզազիայի խոչընդոտ հասարակության մեջ արմատավորված պատմական մատերիալիզմի սկզբունքները:

Բանալի բառեր՝ *մոդեռնիզացիա, անհատական, ավանդույթային, ինդուստրիալ, տնտեսություն, քաղաքակրթություն, պոստմոդեռնհասարակություն, կապիտալիզմ, ազգերիզարգացում, բռնապետություն, ամբողջատիրություն:*

Аревик Петросян,
к. и. н., доцент
АрГУ

ТЕОРИЯ МОДЕРНИЗАЦИИ: ФАКТОРЫ ПРЕПЯТСТВУЮЩИЕ МОДЕРНИЗАЦИИ НКР

В ходе модернизации происходит переход к современному обществу (modern society). Вследствие Великой депрессии возникшая трасформация капитализма, привела к двум путям модернизации: ориентированный к созданию частично регулируемой экономики реформистский вариант, который в корне изменил общий облик капитализма и тоталитарный вариант. Факторами, замедляющими процесс модернизации являются недостаточное развитие процесса демократии и укоренившиеся в обществе принципы исторического материализма, как препятствие индивидуальной модернизации.

Ключевые слова: *модернизация, индивидуальная, традиционная, индустриальная, цивилизация, экономика, постмодерн, общество, капитализм, развитие наций, авторитатрный, тоталитарный*

Arevik V.Petrosyan
PhD in History, assistant professor

MODERNIZATION THEORY: FACTORS IMPEDING THE MODERNIZATION PROCESS IN NKR

Modernization is marked by transition to modern society. Transformation of capitalism which emerged as a consequence of the Great Depression brought forward two types of modernization: the reformistic type based on creating partly regulated market that changed the image of capitalism and the totalitarian type. Factors retarding modernization process are insufficient development of the process of democracy and certain principles of historical materialism which are deep-rooted in the society and impede individual modernization.

Keywords*: modernization, individual, traditional, industrial, economy, civilization, post-modern society, capitalism, development of nations, Authoritarianism, Totalitarianism*

Մոդեռնիզացիան որպես համաշխարհային պատմության նոր հայեցակարգի հարացույց (պարադիգմա) է: Նոր պատմությունը այն ժամանակաշրջանն է, որը ստեղծել է ժամանակակից քաղաքակրթության աշխարհը: Միջնադարից, և միջնադարին մոտ վաղ, նոր ժամանակից այն տարանջատող սահմանը բավականին շոշափելի է: Արևմտյան Եվրոպան՝ առաջին քաղաքակրթությունն է, որտեղ ծագել, ուժ են ստացել և, վերջապես, հաղթել են նոր բուրժուական հարաբերությունները: Առաջին անգամ նրանք ի հայտ են եկել Իտալիայի խոշոր առևտրային քաղաքներում ինչպիսիք են՝ Ֆլորենցիան, Ջենովան, 14-րդ դարի վերջին և 15-16-րդ դարերում Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իսպանիայում և Պորտուգալիայում: Այդ ընթացքը գնալով ընդգրկեց աշխարհի մեծ մասը: «Ներքաշումը» տեղի էր ունենում երկրների միմյանցից տնտեսական կախվածության ու կապերի ամրապնդման և աշխարհի եվրոպականացման պայմաններում:

Ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ տեղաշարժը հստակ սահման է գծել նոր և վաղ նոր ժամանակի միջև, երբ կապիտալիզմը դեռ նոր էր ծագել և գոյություն ուներ որպես կացութաձև: Միևնույն ժամանակ տեղի են ունեցել նաև այլ գլոբալ գործընթացներ, որոնք ընդգրկել են քաղաքակրթության կառուցվածքն ամբողջությամբ: «Բուրժուազիայի հաղթանակն այն ժամանակ նշանակում էր նոր հասարակական կարգի հաղթանակ, բուրժուական սեփականության հաղթանակը ֆեոդալիզմի դեմ, ազգի հաղթանակը գավառականության դեմ,

մրցակցությանը՝ համքարային կարգի դեմ: Հողի սեփականատերի տիրապետությունը՝ սեփականատիրոջ հողին ենթարկեցնելու լուսավորությունը՝ սնահավատության, ընտանիքը՝ցեղանվան, ձեռներեցությունը՝ հերոսական ծուլության, բուրժուական իրավունքը՝ միջնադարյան արտոնությունների դեմ»[1]

Նոր ժամանակներում սկսեց ձևավորվել ինդուստրիալ քաղաքակրթությունը, որը կառուցվում էր սկզբունքորեն այլ հիմքերի վրա, քան նրան նախորդող ավանդույթայինը:Ավանդույթային քաղաքակրթության հիմքերի քայքայումը ստացել է մոդեռնիզացիա անվանումը: «Մոդեռնիզացիան ավանդույթային հասարակությունից ժամանակակցին անցումն է: Ավանդույթային հասարակությունը ժամանակակիցներից տարբերվում է մի շարք հատկություններով՝ կախվածությամբ կրոնական և դիցաբանական պատկերացումներից սոցիալական կյանքի կազմակերպմամբ, զարգացման շրջափուլայնությամբ, հասարակության կոլեկտիվ բնույթով և ընդգծված անհատականության բացակայությամբ, կրոնական,այլ ոչ թե գործիքային արժեքների նախընտրելի կողմնորոշմամբ, իշխանության բռնապետական բնույթով, հետաձգված պահանջարկի բացակայությամբ, այսինքն՝ նյութական ոլորտում արտադրելու ունակությամբ, ոչ թե օրվա կարիքը հոգալու համար, այլ հանուն ապագայի:Զանգվածային կրթության բացակայությունը, հատուկ հոգեկան կերտվածքի գերիշխումը ՝ ոչ ակտիվ անձի /հոգեբանության մեջ անվանվում է Բ տիպի մարդ/:Կողմնորոշումը՝աշխարհայացքային գիտելիքի վրա է հիմնվում, այլ ոչ թե գիտության, նաև տեղայնականի գերակշռությունը համապարտակի դեմ:

Ավանդույթային հասարակություններում շատ գիտնականներ ամենակարևորը համարում են ընդգծված անհատականության բացակայությունը: Սակայն դա ավանդույթի գերիշխանության հետևանք է, քանի որ անհատականության համար սոցիալական պահանջարկը՝ դա հարցում է ստեղծագործական գործունեության՝ նորը արտադրելու սուբյեկտի ունակությամբ: Այն ծագում է ժամանակակից հասարակության մեջ…»: [2]

Մոդեռնիզացիան բարդ ու երկարատև գործընթաց է, որն ընգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն իր մեջ ներառում է՝

- Ուրբանիզացիան՝ քաղաքների գերարագ աճը:Քաղաքը պատմության մեջ առաջին անգամ ստանում է տնտեսական գերիշխանություն՝ գյուղը մղելով երկրորդ պլան:

- Ինդուստրացիան՝ մեքենաների օգտագործման անընդհատ աճն է, որը մեկնարկել է 18-դ դարի երկրորդ կեսին՝ Անգլիայում տեղի ունեցած արդյունաբերական հեղաշրջմամբ:

-Քաղաքական կառույցների դեմոկրատացումը,որը նախադրյալներ է ստեղծել քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման համար:

-Բնության և հասարակության մասին գիտելիքների աննախադեպ արագ աճը մյուս ժամանակաշրջանների համեմատությամբ:

-Սեկուլյարիզացիան՝ գիտակցության աշխարհիկացումը և աթեիզմի զարգացումը:

Միմյանց հետ անքակտելիորեն կապված բոլոր այս գործընթացները փոխել են մարդու կերպարը, նրա արժեհամակարգը և առաջին հերթին՝նրա պատկերացումները կյանքում ունեցած իր դերի և տեղի մասին:

Ավանդույթային քաղաքակրթության մարդը վստահ էր շրջապատող բնության և այն հասարակության կայունության մեջ, որտեղ նա ապրում էր:

Դրանք ընկալվում էին որպես անփոփոխ՝ ի սկզբանե գոյություն ունեցող Աստվածային օրենքների համաձայն: Ժամանակակից մարդը նայում է հասարակությանը և բնությանը այլ կերպ՝ համարելով, որ դրանք ոչ միայն հնարավոր է , այլև նույնիսկ ցանկալի է վերահսկել և վերափոխել:

Սկզբունքորեն այլ էին դառնում պետական իշխանության հանդեպ վերաբերմունքը՝ մարդկանց աչքերում նա զրկվում է Աստվածային վավերացումից, նրան ընկալում են բանապաշտորեն, նրա մասին դատում են կառավարության լծակները ստանձածների այս կամ այն չափով հաջողակ գործողությունների արդյունքներով: Պատահական չէ, որ մոդեռնիզացիան հեղափոխությունների՝աշխարհը բռնի ճանապարհով վերակառուցելու գիտակցական փորձերի ժամանակաշրջան է:

Մոդեռնիզացված մարդը՝ շարժունակ անձ է, որը արագ հարմարվում է շրջապատող կյանքում տեղի ունեցող փոփոխություններին: Ի տարբերություն միջնադարյան մարդուն՝ նա սահմանափակված չէ իր քաղաքի, հարազատ գյուղի սոցիալական շրջանակներով: Ուստի ժամանակակից մարդն իրեն զգում է ավելի խոշոր հանրության՝ դասակարգի կամ ազգի մաս:

Փոխվում է նաև զանգվածային գիտակցությունը: Գրագիտության տարածման և զանգվածային լրատվամիջոցների ի հայտ գալու շնորհիվ, զանգվածային գիտակցության և մտավոր էլիտայի գիտակցության միջև միջնադարում գոյություն ունեցող անդունդը նեղանում է:

«Մոդեռնիզացիայի ընթացքում տեղի է ունենում անցումը ժամանակակից հասարակությանը (modern society):

Այն ներառում է նորարարության գերակշռությունը ավանդույթի նկատմամբ, սոցիալական կյանքի աշխարհիկ բնույթը, համընթաց **(ոչ շրջափուլային)** զարգացումը, ընդգծված անհատականությունը,առավելապես դեպի գործիքային արժեքներները ուղղված կողմնորոշումը, իշխանության ժողովրդավարական համակարգը, հետաձգված պահանջարկի առկայությունը, ինդուստրիալ բնույթը, զանգվածային կրթությունը, գործունյա հոգեբանական կերտվածքը (Ա տիպի անձը): Ճշգրիտ գիտությունների և տեխնոլոգիաների նախապատվությունը աշխարհայացքային գիտելիքներին (տեխնոգեն քաղաքակրթությունը) նաև համապարփակի գերակայությունը տեղայնականի նկատմամբ:

[1] Буржуазия и контрреволюция //Маркс К., Энгекьс Ф. Соч. 2-е изд. Т. 6. С. 114-115. https://fil.wikireading.ru/28182
[2] Федотова В. Г. Модернизация «другой» Европы. Philosoph1.narod/ru/www/htm/iphraslibraryfedot_fedotmod.htmi./:

Ժամանակակից (modern) հասարակությունները, ըստ էության հակառակ են ավանդույթային հասարակությանը:Ուստի ժամանակակից հասարակության անցումը մոդեռնիզացիային դրամատիկ գործընթաց է:

Անհատականությունը հանդես է գալիս որպեսժամանակակիցհասարակությունների կիզակետը:

Ոչ միայն օրվա սպառումը, այլև հանուն ապագայի ակտիվ գործունեությունը ծնում է այստեղ կյանքի մրցավազքին միշտ պատրաստ աշխատամոլին: Նրա կայացումը Արևմտյան Եվրոպայում իրագործվում է կապիտալիզմի բողոքական էթիկայի հանդես գալու հիման վրա: Բայց ավելի ուշ ոչ բողոքական մոդեռնիզացիաները անհատականության փոփոխման մեջ նույն արդյունքն են տվել: Արդիական է դառնում ոչ միայն հասարակությունը, այլ նաև մարդը: Նրան բնորոշում է հետաքրքրությունը դեպի նորը,փոփոխություններինպատրաստ լինելը, հայացքների խայտաբղետությունը,կողմնորոշվածությունը դեպի ինֆորմացիա,ժամանակի և նրա փոփոխությունների հանդեպ լուրջ վերաբերմունքը, արդյունավետությունը, արդյունավետության և ժամանակի պլանավորումը, անձնական արժանապատվությունը, անջատվողականությունը և լավատեսությունը:Անհատական մոդեռնիզացիան նույնքան դրամատիկ գործընթաց է, որքան սոցիալականը»:[1]

Իհարկե,մոդեռնիզացիայի հետ կապված այդ գործընթացներիցոչ բոլորն են ինքնարտահայտվել միանգամից և ամբողջ ծավալով: 17-րդ և հատկապես 18-րդ դարերում զարգանում էին քաղաքները, բայց գյուղատնտեսությունը շարունակում էր պահպանել իր առաջատար դիրքերը տնտեսության մեջ: Նրա մեջ ներառված էր բնակչության մեծ մասը:Ագրարային սեկտորում երկար ժամանակ պահպանվում էրտեխնիկական հետամնացությունը և մանր արտադրությունը:

18-րդ դարի երկրորդ կեսին սկսվում է առաջին մեքենաների օգտագործումը, բայց տնտեսությունն, ընդհանուրառմամբ ինդուստրացված չէր: Նվազումէրգյուղերի դերը, սակայն արտադրության անընդատ կատարելագործումը չվերածվեցառաջատար սկզբունքի:

Այնուամենայնիվ, տեղի ունեցած փոփոխությունները քայքայել էին ավանդապաշտության հիմքերը և նրա փլուզումը առաջատար արևմտաեվրոպական երկրներում բացարձակապես ակնհայտ էր:

Կապիտալիզմը և մոդեռնիզացիան անխզելիորեն կապված գործընթացներ են, որոնք կարծես սնուցվում են միմյանցից: Կապիտալիզմը երբևէ չի կառուցվել ավանդույթային հասարակության մեջ: Որևէ երկիր չի դարձել ճշմարտացիորեն մոդեռնիզացված՝ շրջանցելով կապիտալիզմը: Եվ դա բնական է՝ կապիտալիզմը կողմնորոշված է դեպի նորամուծությունները, ազատ մրցակցությունը, որը խթանում է մասնավոր նախաձեռնությունը: Եվ այս իմաստով այն հակասում է հենց ավանդապաշտության ոգուն:

Պատմաբանները հեղափոխությունը համարում են մոդեռնիզացիայի ճանապարհներից մեկը: Հեղափոխությունները պատմության մեջ այնքան էլ հաճախ չեն տեղի ունենում: Հազարամյակների ընթացքում՝մինչևնոր ժամանակները,ոչ մի քաղաքակրթություն հեղափոխություն չի վերապրել (խոսքըչի գնում հեղափոխական տեղաշարժերի մասինինչպիսին, օրինակ, անտիկ շրջանից անցումն է միջնադարին): Եվ կան երկրներ որոնք մինչ այսօր հեղափոխական ցնցումներ չեն ապրել:

Հեղափոխությունը՝ արմատական, համեմատաբար արագ (պատմական ժամանակի շրջանակներում) քաղաքական և սոցիալական կառուցվածքների, ինչպես նաև հասարակության մեջ ձևավորված արժեքների հիմնական համակարգերի բռնի փոփոխությունն է: Հեղափոխությանը մոտեն խռովությունները, ապստամբությունները և պալատական հեղաշրջումները, սակայն միայն հեղափոխություններն են, որոնք բերում են հին կարգերի ամբողջական արմատական ջարդին:

Որպես կանոն, նրանք ամբողջությամբ ավանդույթային հասարակության մեջ չեն ընթանում և դժվար թե տեղի ունենան մոդեռնիզացիայիբարձր մակարդակիհասածհասարակություններում:

Հեղափոխություններին ենթակա են ավանդույթականությունից դեպի մոդեռնիզացիա անցումային փուլում գտնվող հասարակությունները:

Հեղափոխությունների տարածման աշխարհագրությունը սկզբում եղել է ոչ այնքան մեծ՝ 16-18-րդ դդ. այն ընդգրկել է Արևմտյան Եվրոպայի միայն մի քանի պետություն(Հոլանդիան՝ 1566-1609թթ., Անգլիան՝ 1640-1660 թթ., Ֆրանսիան՝ 1789-1795թթ.), և հյուսիս-ամերիկյան գաղութները(1775 – 1783 թթ.):

19-րդ դարում մոդեռնիզացիայի աշխարհագրական շրջանակները սկսեցին ընդլայնվել: Միաժամանակ ավելացավ հեղափոխությունների թիվը: 20-րդ դարում նրանք ընդգրկեցին ոչ միայն Արևմուտքը, այլ նաև Արևելքը:

Հայտնի է, որ հեղափոխություններն առաջանում են այն իրավիճակում, երբ սոցիալ-տնտեսական զարգացումը հակասության մեջ է մտնում ավելի կարծրացած քաղաքական կառուցվածքի հետ: Նրանց համարանրաժեշտ է ծանր ճգնաճամի իրադրություն, որըստեղծում է հեղափոխական կացություն: Բայց հեղափոխության ծագման համար, բացի ճգնաժամից, անհրաժեշտ է ևս մեկ պայման: Մարդկանց գիտակցությունն պետք է բավականին մոդեռնիզացված լինի, որպեսզի նրանք հավատան պետական կարգի փոփոխության հնարավորությանը, ինչպես նաև դրա ցանկալի լինելուն: Իսկ դա իրականանում է քաղաքական կարգի անխախանության և իշխանության աստվածային ծագման մասին ավանդույթային պատկերացումների փլուզման դեպքում:

[1] Федотова В. Г. Модернизация «другой» Европы. Philosoph1.narod/ru/www/htm/iphraslibraryfedot_fedotmod.htmi./:

Այս կամ այն երկրի ապագան կախված է, առաջին հերթին նրանից, թե որքանով ակտիվ է նա ներքաշվել մոդեռնիզացիայի գործընթացի մեջ, որքանով է այդ երկրում բուռն թափով ընթանում կապիտալիզմի կազմավորումը :

Կապիտալիզմը և մոդեռնիզացիան ավելի հստակ են ընդգծելԱրևմուտքը և Արևելքը սահմանազատող գիծը, վերջնականապես պայմանավորելով Արևմուտքի գերակայությունը:

Մոդեռնիզացիայի և կապիտալիզմի ևս մի կենտրոն ի հայտ է եկել Անգլիայի հյուսիսամերիկյան գաղութներում: Արևմտաեվրոպական քաղաքակրթության ներսում ուրվագծվեցին տարբեր աստիճանավորումներ՝ բաժանելով այն մոդեռնիզացիայի և կապիտալիզմի զարգացման հաջողությունների տեսակետից՝ կենտրոնի և ծայրամասի:

Առաջադեմ երկրների շարքերում հայտնվեցին Հոլանդիան,Ֆրանսիան և Անգլիան, որտեղ առաջացան բարենպաստ պայմաններ ավանդապաշտական գաղափարները հետին պլան մղելու համար: Գերմանիան, Իտալիան, Իսպանիան, Սկանդինավյան երկրներ մղվեցին ծայրամաս: Բայց կային նաև կենտրոնին պատկանող երկրներ, որոնք զարգանում էին ոչ համաչափ և ոչ միատեսակ: Ձեռք բերված առաջնությունը դժվար էր պահել, որովհետև նոր դարաշրջանը պահանջում էր մշտական նորամուծություններ, քաղաքական և տնտեսական կառույցների ճկունություն: Զարգացման դանդաղ տեմպերը արդեն հաստատված էին և պահանջում էին ծայրամասը կենտրոնից բաժանող հեռավորության հաղթահարման համար շատ ժամանակ և ջանքեր:

17-18-րդ դդ.գաղութային համակարգի կազմավորման դարաշրջանն է: Գաղութային համակարգում ընդգրկվել են Արևելքի շատ երկրներ և Ամերիկայի մեծ մասը: Արևմտյան Եվրոպայի հաջողությունները բացատրվում են, նախ և առաջ մոդեռնիզացիայի արագ զարգացմամբ, որն ապահովել է ռազմական հզորությունը, որին չկարողացան դիմակայել գրեթե բոլոր ավանդույթային քաղաքակրթությունները:

20-րդ դարի 30-ական թվականներին Մեծ անկման հետևանքով առաջացած կապիտալիզմի փոխակերպման գործընթացը բերել է հարցի լուծման 2 տարբերակի՝մասնակիորեն կարգավորվող տնտեսության ստեղծմանն ուղղված բարեփոխումների տարբերակին, որը արմատապես փոխել է կապիտալիզմի բովանդակությունը, դրան դիմել են ԱՄՆ և Շվեդիան, ինչպես նաև հասարակության և տնտեսության վրա տոտալիտար հսկողության տարբերակը՝ ԽՍՀՄ և ֆաշիստական Գերմանիա:

Տնտեսության արագացված զարգացումը կամ տնտեսական ասպարեզում անցումը դեպի մոդեռնիզացիա եղել է ամբողջատիրության գլխավոր խնդիրը:

Ինչպես ցույց է տվել ժամանակը, տոտալիտարիզմն ի վիճակի չէր իր գլխավոր խնդրի՝ մոդեռնիզացիայի կատարումն ավարտին հասցնելու:

Այս կամ այն լոկալ քաղաքակրթության կայացումը կապված է տվյալ ժողովրդի էթնիկ պատմության հետ:[1](Լ.Գումիլյով): Այս կապակցությամբ, առանց բացառությունների, բոլոր պատմական գործընթացները,այդ թվում մոդեռնիզացիայի գործընթացը ԼՂՀ-ում դիտարկվում է հայ ժողովրդի պատմության համատեքստում:

20-րդ դարի սկզբին առաջատար եվրոպական երկրներում մոդեռնիզացիան հասել է իր ավարտին: Արևելյան Եվրոպայում և հատկապես Ռուսաստանում մոդեռնիզացիան կրել է անավարտ բնույթ:

Հայ ժողովուրդը 20-րդ դարում անցել է երկու բռնապետական համակարգերի աղացի միջով՝ Թուրքիայում երիտթուրքերի և Ռուսաստանում՝ բոլշևիկների: Երիտթուրքերը և նրանց հետևորդները՝ քեմալականները, իրականացրել են հայերի ցեղասպանությունը, իսկ բոլշևիկները, ի հակառակ Ռուսաստանի շահերի, 1918թ. մարտին Բրեստ-Լիտովսկինախահամաձայնության հետևանքով օրակարգից ոչ միայն հանել են այդ ժամանակ գրեթե ամբողջովին ռուսական բանակի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստանի մասին հարցը, այլ նաև հրաժարվել են Կարսի մարզից, որը ցարական Ռուսաստանի կազմում էր արդեն 40 տարի:[2]

1920-1921թթ. Արևելյան Հայաստանը (ներառյալ Արցախը) ենթարկվել է Լևանդովսկու 11-րդ Կարմիր Բանակի և Քյազիմ Կարաբեքիրի թուրքական բանակի համատեղ ագրեսիային: Հայկական հանրապետությունը բռնի խորհրդայնացվել է, հայերին թողել են մի կտոր հող՝ նախկին ռուսաստանյան Երևանի նահանգից Խորհրդային Հայաստանի տեսքով:

1921թ. մարտի 16-ին բոլշևիկները, ղեկավարվելով «համաշխարհային հեղափոխության» խելացնոր գաղափարներով, Թուրքիայի հետ կնքել են Մոսկովյան պայմանագիրը՝ ամրագրելով Հայաստանի մասնատումը և մի շարք հայկական հողեր անօրեն մտցնելով Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: Այս պայմանագիրը դառնում է հիմնական գործիքը, որի օգնությամբ Թուրքիան ամրագրել է Հայկական հարցի «վերջնական լուծումը»՝ ձգտելով օրինականացնել հայերի ցեղասպանության արդյունքները և ամբողջովին բացառել Արևմտյան Հայաստանի ժողովրդի իրավունքը իր հայրենիքի վրա:

Հայ ժողովրդի հետագա պատմությունը անքակտելիորեն կապված է Խորհրդային հասարակության պատմության հետ:

1936թ. դեկտեմբերի 5-ին ընդունվել է նոր՝ Ստալինյան սահմանադրությունը, որը հռչակել է սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում: Սակայն խորհրդային հասարակությունը սոցիալիզմի հետ որևէ առնչություն չի ունեցել:Առաջինը՝ ժողովուրդը այդպես էլ չի դարձել արտադրության միջոցների տերը, քանի որ հնարավորություն չի ունեցել ազդեցություն գործելու պետության կառավարման վրա:Երկրորդը՝երկրում գոյություն չի ունեցել բաշխումը ըստ աշխատանքի: Դա հատկապես վերաբերում էր գյուղին, որտեղ բնակվում էր երկրի բնակչության 2/3-ը: Կոլեկտիվացմանարդյունքում գյուղացիները ոչ միայն կորցրել են հեղափոխության

[1]Гумилев Л.Н. Этногенез и биосфера Земли. 3-е изд. – Л.: Гидрометеоиздат, 1885. – 528 с.
[2] Всероссийский Армянский конгресс. Сборник материалов, изд. «Армянский вестник», Москва, 2002. С. 9..(опубликовано в «Независимой газете» от23.08.2000)

ընթացքում նվաճած հողը և նորից ամրակցվել հողին, այլ նաև ենթարկվել են շահագործման, որը իր բնույթով չի տարբերվել կոռից և բահրայից:Երրորդը՝ թեև երկրում վերացել են շահագործող դասակարգերը, շահագործումը չի վերացել, քանի որ բանվոր դասակարգը և գյուղացիությունը շարունակել են ենթարկվել շահագործմանը դրսից:[1]

Այդ պատճառով 20-րդ դարի երեսունականների խորհրդային հասարակությունը իրենից ներկայացնում էրքաղաքում՝ պետական կապիտալիզմի, գյուղում՝ պետական ֆեոդալիզմի համակցությունը: Իսկ քանի որ երկրի բնակչության մեծ մասը ապրում էր գյուղում, շահագործման պետական-ֆեոդալական մեթոդները գերիշխել են և իրենց կնիքն են թողել ամբողջ հասարակության վրա:

Այսպիսով՝ 1917թ. հեղափոխությունը դուրս չի եկել բուրժուական հեղաշրջման շրջանակներից և որպես սոցիալիստական հեղափոխություն կրել է պարտություն: Սակայն ելնելով առանձնահատուկ հանգամանքներից այս պարտությունը հանգեցրելէ ոչ թե նախկին բուրժուա-կալվածատիրական կարգերի վերականգնմանը, այլ նոր պետական ֆեոդալական- կապիտալիստական համակարգի հաստատմանը: Սոցիալիզմի հետ որևէ առնչություն չունեցող նման համակարգի հաստատումը օբյեկտիվորեն նշանակել է իր էությամբ հակահեղափոխական Թերմիդորյան հեղաշրջում և մեր երկրում միջազգային կապիտալի որոշ ֆինանսա-արդյունբերական օղակների դիկտատուրայի հաստատում:[2]

Բոլշևիզմը՝ որպես մարքսիզմի ռուսական տարբերակ, ձևափոխվել է մարքսիզմ-լենինիզմի, որը, բացի տերմինաբանությունից, մարքսիզմի հետ որևէ ընդհանրություն չի ունեցել: Ըստ էության նա վերածվել է չքավոր զանգվածների կրոնի: Այս առումով նրա ճակատագիրը նման էր վաղ քրիստոնեության ճակատագրին: «Թերմիդորյան» հեղաշրջման ավարտը միաժամանակ նշանավորել է բոլշևիկյան կուսակցության յուրահատուկ կրոնական միաբանության վերածվելուգործընթացի ավարտը, որը սկսել է ձեռք է բերել կառավարող խավի հատկանիշներ[3]:

Հոչակման 25 տարիների ընթացքում ԼՂՀ-ի առջև մոդեռնիզացիայի գործընթացի հետ միաժամանակ կանգնած էին երկու խոշորագույն խնդիրներ՝ հաղթահարել խորհրդային անցյալը և վերականգնել պատերազմից ամբողջովին տուժած տնտեսությունը և նրաենթակառուցվածքը: 25 տարի անց՝ Խորհրդային անցյալը իր ռեժիմի բազմաթիվ մնացորդներով շարունակում է մնալ ԼՂՀ-ում մոդեռնիզացիայի գործընթացը արգելակող գործոններից մեկը:

ԼՂՀ-ում մոդեռնիզացիայի գործընթացը արգելակող հաջորդ գործոնը՝ ԼՂՀ-ի միջազգային մեկուսացումն է: Հայերը համարում էին և նրանցից շատերը առ այսօր շարունակում են համարել, որ Թուրքիան և Ռուսաստանը, հեռանալով բռնապետական և ամբողջատիրականանցյալից, հասնելու ենքաղաքակրթությանայնպիսի մակարդակի(նկատի է առնվում անցում դեպի postmodern հասարակություն), որը թույլ կտա ուղղել անցյալ դարում հայ ժողովրդին հասցրած ծանր հարվածների հետևանքները:

Սակայն այս հույսերը, ցավոք, չեն արդարանում: Թուրքիան այդպես էլ չիճանաչել հայ ժողովրդի դեմ իր կողմից կատարած հանցագործությունը 1915-1923թթ. ցեղասպանությունը: Ավելին, նա հրաժարվում է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի Հանրապետության հետ, ամբողջովին աջակցում է Ադրբեջանին Արցախի դեմ ագրեսիայում, հայերի հասցեին հանդես է գալիս նոր սպառնալիքներով,շանտաժի է ենթարկում հայերի ցեղասպանության պատմական փաստը ճանաչած երկրներին:

Նոր Ռուսաստանը այդպես էլ չի հրաժարվել Խորհրդայինգաղափարականացված մոտեցումից ներքին և արտաքին քաղաքականությունում:Ունենալով նման արտաքին թշնամիներ, ինչպիսիք են Ադրբեջանը և Թուրքիան, և այնպիսի դաշնակից ինչպիսին Ռուսաստանն է, հայ ժողովրդի համար մոդեռնիզացիայի գործընթացը ավարտին հասցնելը և պոստ-մոդեռն հասարակություն կառուցելը դառնում է գերնպատակ է, որիցկախված է նրա ապագա գոյությունը:[4]

Արևմտյան քաղաքակրթության փորձի ուսումնասիրությունը մոդեռնիզացիայի տեսության համատեքստում թույլ է տալիս կողքից դիտարկել ԼՂՀ-ի 25 տարիների զարգացման գործընթացը, գործնական տեսակետից գնահատել նվաճումները, օբյեկտիվորեն մոտենալ բացթողումներին: ԼՂՀ-ում մոդեռնիզացիայի ընթացքը արգելակող բոլոր ներքին գործոնների միջև անհրաժեշտ է նշել մեկ ընդհանրացված գործոն՝ ժողովրդավարության ոչ բավարար զարգացումը, որը պայմնանավորված է մոդեռնիզացված հասարակության գլխավոր սոցիալական շերտի՝ միջին խավի բացակայությամբ: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հասարակության դեմոկրատացումը հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը:

«Պատմության վերջը և վերջին մարդը» աշխատության հեղինակ, ամերիկացիքաղաքագետ Ֆրենսիս Ֆուկույաման 2016թ. փետրվարին Ազատություն ռադիոկայանի վրացական խմբագրությանը տված իր հարցազրույցում ասել է հետևյալը՝«Ե'վ Պուտինի կառավարությունը, և' Իսլամական պետությունը հավերժ չեն, իսկ մարդկությունը դեռևս չի հնարել ազատական ժողովրդավարությունից առավելը»[5]:

Մոդեռնիզացիան ոչ բոլոր դեպքերում է համարվում ժողովրդավարություն: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Արևմուտքի քաղաքագետները և վերլուծաբանները խոսում էին ամբողջատիրությունից դեպի

[1] Островский А. В. История Цивилизаций, изд. Михайлова В. А.., Санкт-Петербуег. 2000. С 297.
[2] Островский А. В. История Цивилизаций, изд. Михайлова В. А.., Санкт-Петербуег. 2000. С 297.
[3] Там же.
[4] Всероссийский Армянский конгресс. Сборник материалов, изд. «Армянский вестник», Москва, 2002. С. 10.(опубликовано в «Независимой газете» от23.08.2000)
[5] Аравот ru,aravot.am. 2016.02.17.

ժողովրդավարություն և պլանային տնտեսությունից դեպի ազատ շուկա մեծ անցումային ժամանակաշրջանի մասին, սակայն պետությունների մեծ մասում, բացառությամբ մի քանիսի, ուժեղ է բռնապետությունը. ԽՍՀՄ-ի լուծարումը բերել է ազգայնականության և քսենաֆոբիայի աճին, այլ ոչ թե ազատականության: Freedom House կազմակերպության կողմից հրատարակված Nations in Transit(«Ազգերը անցումային շրջանում») զեկույցում խոսքը խոսքը գնում է անցումային շրջանի մասին:[1] Անդրադառնալով ժողովրդավարության ընթացքը արգելակող գործոններին՝ Ֆրենսիս Ֆուկույաման նշված հարցազրույցում ասել է հետևյալը՝«Շատ մարդկանց պատկերացումները այն մասին, որ 1991թ. հետո անցումը կատարվելու է արագ, սխալ է և իհարկե մի շարք բռնապետական ռեժիմներ այդ ժամանակներից համախմբվել են, բայց եթե մենք նայում ենք եվրոպական պատմությանը, ապա ժողովրդավարացումը Արևմտյան Եվրոպայում նույնպես ընթացել է 150 տարիների ընթացքում, այնպես որ, վերջին 20 տարիների ձախողումը չի նշանակում, որ նման շարժումը առհասարակ անհնար է: Շատ դեպքերում դա կապված է տնտեսական զարգացման հետ, որովհետև բազմաթիվ միջին խավ և կրթված բնակչություն ունեցող արագ զարգացող երկրներում քաղաքական կյանքում մեծ մասնակցության պահանջարկ կա: Ըստ իս՝ պուտինիզմի աճը Ռուսաստանում դա մոդեռնիզացիայի տապալումն է՝ պայմանավորված հենց նրանով, որ այս երկրներում չի ձևավորվել միջին խավը »:[2]

Այսպիսով, քաղաքական առումով մոդեռնիզացիայի գործընթացը պահանջում է հասարակության իրական ժողովրդավարացում, սոցիալական առումով՝ միջին խավի կայացման, իսկ տնտեսական առումով՝ պետականորեն կարգավորվող շուկայական տնտեսության հաստատման:

Անհատական մոդեռնիզացիան ևս կարևոր հանգամանք է ԼՂՀ-ի զարգացման համար: Կառավարական օղակների, գիտադասախոսական կազմի մեծ մասը շարունակում է ղեկավարվել պատմական մատերիալիզմի սկզբունքներով:

Ընդհանուր բնակչությունը գտնվում է ռուսական լրատվամիջոցների ազդեցության տակ: Ուստի հասարակության մեջ տարածված են հետխորհրդային կարծրատիպեր:

[1]Նույն տեղը
[2]Аравот ru,aravot.am. 2016.02.17.